ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ք.Աշտարակ 2024թ. հոկտեմբերի 23 -ին, N 493 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7-Ի N 140-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 5-րդ մասով, 37-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի վարույթում քննված թիվ 62272523 քրեական վարույթով Նազիկ Վարանցովի Նիկոլյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված պաշտոնավարման կասեցումը վերացնելու մասին 2024 թվականի հոկտեմբերի 21-ի որոշումը և ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեից 2024 թվականի հոկտեմբերի 23-ին ստացված N 18-728 կգ-24 գրությունը, ***որոշում եմ***.

1. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Արագածոտնի մարզպետի 2024 թվականի հունիսի 7-ի N 140-Ա որոշումը և լուծել ՀՀ Արագածոտնի մարզի «Աշտարակ քաղաքի Գ.Ղափանցյանի անվան հ.4 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Նարե Խաչատրյանի հետ կնքված ժամկետային աշխատանքային պայմանագիրը:
2. ՀՀ Արագածոտնի մարզի «Աշտարակ քաղաքի Գ.Ղափանցյանի անվան հ.4 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Նազիկ Վարանցովի Նիկոլյանին համարել աշխատանքի մեջ 2024 թվականի հոկտեմբերի 24-ից:
3. ՀՀ Արագածոտնի մարզի «Աշտարակ քաղաքի Գ.Ղափանցյանի անվան հ.4 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Նազիկ Նիկոլյանին վճարել իրեն հասանելիք աշխատավարձը պաշտոնավարման կասեցման ողջ ժամանակահատվածի համար:
4. Սույն որոշման մասին տեղեկացնել ՀՀ Արագածոտնի մարզի «Աշտարակ քաղաքի Գ.Ղափանցյանի անվան հ.4 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Նազիկ Նիկոլյանին:

Восстановимая подпись

X

VERIFIED OCSP 24.10.2024 13:25:54 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ